



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶ
ԼՈՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 35

«03» ապրիլի -2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.


Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լոսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 31-ի թիվ 3 նիստի որոշումները:

Առդիր՝ «22» թերթ:

ԼՈՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ



Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9-Ա

«31» մարտի 2014թ.

թիվ 3 նիստ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ավագանու 2014 թվականի մարտի 31-ի թիվ 3 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ. Տերտերյան



ԼՈՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 10⁰⁰

Հավելված
Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի մարտի 31-ի
թիվ 3 նիստի N 9-Վ որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1/ Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 31-ի թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին.
- 2/ Ծաղկեպսակներ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին.
- 3/ Համայնքի մահացած բնակիչների ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին.
- 4/ Բենզին ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին.
- 5/ Համակարգիչների և տպիչների ընթացիկ նորոգումների և լիցքավորումների համար գումար հատկացնելու մասին.
- 6/ Դրամական օգնություն հատկացնելու մասին.
- 7/ Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին:
- 8/ Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը մրցութային կարգով վաճակալությամբ տրամադրելու մասին.
- 9/ Մանկապարտեզի շենքի վերանորոգման նպատակով գումար հատկացնելու մասին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10-Ա

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ԾԱՂԿԵՊՍԱԿՆԵՐ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, և հիմք
ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Տեղական
ինքնակառավարում» 0111 ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»
4239 հոդվածից 200000 /երկու հարյուր հազար/ դրամ գումար հատկացնել
ծաղկեզամբյուղներ և ծաղկեպսակներ ձեռք բերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ

Ղեմ

Զեռնալահ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ. Տերտերյան

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 10³⁰



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11-Ա

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և ինքն ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի մահացած բնակիչների ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 40000 /քառասուն հազար/ ալան դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ. Տերտերյան

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 11⁰⁰



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12-Ա

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ԲԵՆԶԻՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Տրանսպորտային նյութեր»՝ 4264 հոդվածից 480 000 /չորս հարյուր ութսուն հազար/ դրամ գումար հատկացնել գյուղապետարանի ծառայողական ավտոմեքենայի օգտագործման համար բենզին ձեռք բերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ. Տերտերյան

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 11³⁰





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13-Ա

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՊԻՉՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԼԻՑԵՆԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք
ընդունելով գյուղապետի առաջարկությունը,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Տեղական
ինքնակառավարում» 0111 ծրագրի «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ
նորոգում և պահպանում»՝ 4252 հոդվածից 110000 /մեկ հարյուր տասն հազար/ դրամ
գումար հատկացնել գյուղապետարանի համակարգիչների և տպիչների ընթացիկ
նորոգումների և լիցքավորումների նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեմնալսի
Ա. Գրիգորյան		_____	_____
Գ. Սարգսյան		_____	_____
Խ. Տերտերյան		_____	_____

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ _____ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 12⁰⁰



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14-Ա

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ.Տերտերյան



ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը՝ 12⁰⁰

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուիսգյուղի
գյուղական համայնքի տնտեսական
2014 թվականի մարտի 31-ի թիվ 3
նիստի N 14-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՅՈՂ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

- 1/ Պարզիկ Աբրահամյան - 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ.
- 2/ Սիրանուշ Գրիգորյան - 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ.
- 3/ Լուիզա Շամիլյան - 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ.
- 4/ Յովան Տերտերյան - 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ.
- 5/ Նելի համբարձումյան - 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15-Ն

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ,
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ
/ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական համայնքի գյուղապետ Ս.Կարապետյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ

Կողմ

Դեմ

Զեռնալահ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ. Տերտերյան



ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏՈՒՄ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի մարտի «31»
գ. Լուսազյուղ
Ժամը 13⁰⁰

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսազյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի մարտի 31-ի թիվ 3
նիստի N 15-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ
ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ
ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄԻՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Կազմակերպչի կողմից հրապարակային աճուրդների մրջոցով գույքի, գույքային իրավունքների իրացման գործունեությունը:

1.2. Սույն կանոնակարգով չի կարգավորվում փակ աճուրդների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

1.3. Սույն կանոնակարգով սահմանվում են աճուրդի ձևերը՝ դասական կամ հոլանդական:

1.4. Աճուրդի միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները սահմանվում են օրենքով, իսկ աճուրդների ընթացքում վճարները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

2. ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ԶՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1. Աճուրդը պետք է սկսվի 9:00-19:00 ընկած ժամանակահատվածում, իսկ վաճառքը պետք է իրականացվի հրապարակային ծանուցման մեջ նշված օրը:

2.2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի զանգվածային լրատվության միջոցներով կամ էլեկտրոնային միջոցների օգնությամբ հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 15 օր առաջ, եթե վաճառվող գույքի աճուրդով իրացման համար օրենսդրությամբ այլ ժամկետներ սահմանված չեն: Հոդամասերի, ինչպես նաև հողամասերին ամրացված շինությունների աճուրդի մասին հրապարակային ծանուցումը բոլոր դեպքերում պետք է կատարվի հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ կրկնաաճուրդի դեպքում հողամասերին ամրացված շինությունների աճուրդի

մասին հրապարակային ծանուցումը կարող է կատարվել նաև հրապարակային աճուրդի օրվանից առնվազն 15 օր առաջ:

Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը աճուրդի կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ գետեղվում է աճուրդի կայացման վայրում:

2.3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկությունները:

2.4. Հրապարակային ծանուցմամբ կարող է նախատեսվել աճուրդի հաղթող համարված մասնակցի կողմից իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում (30 րոպեի ընթացքում), որը հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հետ չի վերադարձվում:

Հրապարակային ծանուցմամբ կարող է նախատեսվել նաև աճուրդի մասնակցի կողմից լոտի մեկնարկային գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում որպես նախավճար, որը աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է աճուրդի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում, իսկ հաղթող մասնակցի համար հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ և սահմանված ժամկետում ամբողջ գումարի վճարումները չկատարելու դեպքում հետ չի վերադարձվում:

Աճուրդի մասնակցության համար վճարը յուրաքանչյուր աճուրդի համար սահմանում է համայնքի ավագանին, սակայն ոչ ավել 5000 ՀՀ դրամից:

2.5. Գույքի վիճակի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հրապարակված տվյալների անճշտության համար Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում, եթե անճշտությունը չի կատարվել իր կողմից:

2.6. Սույն կանոնակարգին կարելի է ծանոթանալ աճուրդի կազմակերպման վայրում աճուրդը սկսվելու պահից առնվազն 30 րոպե առաջ: Կանոնակարգը տրամադրվում է համապատասխան դիմումի հիման վրա, որի համար Կազմակերպիչը պահանջում է պատճենահանման համար նախատեսված ծախսերը:

2.7. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:

2.8. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք (այսուհետև՝ դիտորդ) աճուրդի դաիլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդի) համար ընդհուպ աճուրդի սկսվելը վաճառվում են դիտորդի տոմսեր:

2.9. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

ա) չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդի կազմակերպչի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ,

բ) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

գ) հարցադրումներ ուղղել աճուրդավարին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ:

դ) աճուրդի ընթացքում դուրս չգալ դաիլիճից կամ չվերադառնալ դաիլիճ՝ բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լոտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույլտվությամբ,

ե) չթաքցնել օրենքով սահմանված աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

3. ԱՃՈՒՐԴԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

3.1. Աճուրդի բացմանը նախորդող երեք օրվա ընթացքում աճուրդից հրաժարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է հատուցել մասնակիցների կրած իրական վնասը:

3.2. Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա կազմակերպիչն աճուրդից պարտավոր է հրաժարվել, եթե՝

1) առկա է սեփականատիրոջ (իրավատիրոջ) գրավոր դիմումն աճուրդից հրաժարվելու վերաբերյալ, եթե աճուրդի անցկացման մասին պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

2) լոտը կամ դրա մի մասը ներառված է սնանկության հետևանքով լուծարվող իրավաբանական անձի կամ անվճարունակ ճանաչված ֆիզիկական անձի գույքի կազմում.

3) առկա է դատարանի որոշումը լոտի վաճառքի սահմանափակման վերաբերյալ:

3.3. Կազմակերպիչը կարող է աճուրդից հրաժարվել, եթե աճուրդ առաջարկողը

խոչընդոտներ է ստեղծում լոտն ուսումնասիրելու համար:

3.4. Աճուրդից հրաժարվելու մասին ծանուցումը պետք է արվի այնպես, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

4. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

4.1. Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ կամ ծանուցման մեջ նշված ժամկետում, չափով և կարգով Կազմակերպիչին մուծել են նախավճար (որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենաբարձր մեկնարկային գին ունեցող լոտի մինչև 5 տոկոսը) և ստացել մասնակցի վկայական:

4.2. Նախքան աճուրդի բացումը մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալ աճուրդի ծանուցման մեջ նշված վաճառվելիք լոտին

(լոտերին): Կազմակերպիչը ծանուցման պահից սկսած (Առաջարկողի աջակցությամբ) ընձեռում է հնարավորություն լոտը (լոտերը) ուսումնասիրելու համար՝ հետևյալ կարգով և ժամկետներում.

ա) անշարժ գույքի համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի),

բ) շարժական գույքի համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ընկած ժամանակահատվածում:

4.3. Եթե վաճառվող լոտն իրավունք է, ապա Կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն տալ մասնակիցներին սույն կանոնակարգի 4.2. կետի ա) և բ) ենթակետում նշված կարգով և ժամկետներում ուսումնասիրելու համապատասխան

օբյեկտը, որի նկատմամբ գոյություն ունի իրավունքը, ինչպես նաև համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը:

4.4. Պայմանագրով կարող են սահմանվել լուտերին ծանոթանալու ավելի երկար ժամկետներ:

4.5. Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

4.6. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

5. ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1. Աճուրդները անց են կացվում դասական (գնի ավելացման) կամ հոլանդական (գնի նվազեցման) եղանակներով:

5.2. Աճուրդը անց է կացնում աճուրդավարը, որը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացվել հարյուր դրամի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

5.3. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

Աճուրդավարը շարունակում է աճուրդը այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկող մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է:

Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու համաձայնություն չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը: Լոտը մեկնարկային գնով (հոլանդական աճուրդի դեպքում՝ նվազագույն գնով) երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

5.4. Դասական աճուրդի դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականի համարին համապատասխանող համարը (քարտը):

Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճիկի երրորդ հարվածից հետո:

5.5. Հոլանդական աճուրդի դեպքում աճուրդավարի կողմից մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը բարձրացնելով իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին և աճուրդավարի կողմից անմիջապես համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

5.6. Հոլանդական ածուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել մեկնարկային գնի 50 տոկոսից, սակայն ոչ պակաս, քան լոտի հաշվեկշռային արժեքի 30 տոկոսը::

5.7. Դասական ածուրդի ժամանակ, եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա ածուրդավարը վիճակահանությամբ որոշում է ածուրդում հաղթող համարված մասնակցին, եթե գործող օրենսդրությամբ ածուրդի մասնակիցներից որևէ մեկը ածուրդի ժամանակ առաջարկված հավասար գնային պայմանների դեպքում չունի տվյալ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունք:

5.8. Վիճակահանությամբ ածուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով.

Ածուրդավարը հայտարարում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառաձալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Ածուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը ածուրդավարը առաջինն է հանում արկղից:

5.9. Հոլանդական ածուրդի ժամանակ, եթե մեկից ավելի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա ածուրդավարը որոշում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին և այդ մասնակիցների միջև իրականացվում է դասական ածուրդ՝ նրանց կողմից առաջարկված գինն ընդունելով որպես մեկնարկային գին: Եթե մեկնարկային գնից բարձր առաջարկներ մասնակիցները չեն ներկայացնում՝ ածուրդում հաղթած մասնակից է համարվում սույն կանոնակարգի 5.8. կետով սահմանված պայմաններով վիճակահանությամբ ընտրված մասնակիցը, եթե չկա տվյալ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունքով օժտված մասնակից:

5.10. Ածուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և Կազմակերպիչը ստորագրում են ածուրդի արդյունքների մասին արձանագրությունը, որից մեկը, հաղթողի կողմից լրիվ վճարումները կատարելու դեպքում, Կազմակերպիչը երեք օրվա ընթացքում տրամադրում է հաղթողին:

5.11. Եթե ածուրդի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

6. ԼՈՏԻ ԳԻՆԸ

6.1. Լոտ(եր)ի գինը սահմանվում է ավագանու որոշմամբ:

6.2. Լոտ(եր)ի գինը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերից: Անշարժ գույքի /բացառությամբ հողամասերի/ ածուրդ-վաճառքը կարող է իրականացվել միայն լիցենզավորված կազմակերպության կողմից այն գնահատվելուց հետո: Ընդ որում, մեկնարկային գին սահմանելիս, եթե գույքի գնահատված արժեքը փոքր է դրա հաշվեկշռային արժեքի 30 տոկոսից, ապա ավագանին մեկնարկային գին է սահմանում գույքի հաշվեկշռային արժեքի 30 տոկոսից ոչ պակաս գումարը:

7. ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

7.1. Աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ, ժամկետ սահմանված չլինելու դեպքում աճուրդում հաղթող ճանաչված անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտ(եր)ի գինը:

Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, երկու օրինակից, որոնցից մեկը մնում է Կազմակերպչի մոտ, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է հանձնարարագրում նշված հաշվին կամ դրամարկղ և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

7.2. Եթե հրապարակային ծանուցմամբ նախատեսվել է աճուրդում հաղթող համարված մասնակցի կողմից տեղում, 30 րոպեի ընթացքում, իր առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարում, ապա նշված գումարը նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ: Մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ:

7.3. Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը չի կատարում 6.2. կետի պահանջները, ապա նա գրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից և դուրս է հրավիրվում: Այդ դեպքում տվյալ լոտ(եր)ի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Աճուրդը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ առկա են տվյալ լոտի գնորդ(ներ) և համարվում է չկայացած ոչ մի գնորդ չլինելու դեպքում:

Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը կատարում է 6.2. կետի պահանջները, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և Կազմակերպչի հետ միասին ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

7.4. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը (ինչպես նաև 6.2. կետում նշված վճարված գումարը) չի վերադարձվում և տնօրինվում է Կազմակերպչի կողմից, իսկ լոտ(եր)ի աճուրդը համարվում է չկայացած:

7.5. Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը:

7.6. Լոտի գնման գնի վճարման պարտավորությունը ենթակա չէ հաշվանցման:

7.7. Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին, բացառությամբ 6.3. կետում նշված դեպքի: Հակառակ դեպքում նախավճարի գումարը մնում է Կազմակերպչին:

7.ԱՆՎԱՎԵՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԸ

7.1. Լոտի վերաբերյալ աճուրդն, շահագրգիռ անձի պահանջով անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենսդրական ակտերի և սույն կարգի պահանջների խախտման դեպքում:

7.2. Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

7.3. Ածուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր ածուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով:

5. Լոտի վերաբերյալ ածուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր ածուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե ածուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լոտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման հետ:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Կազմակերպիչը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ և պահպանել ածուրդի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) ածուրդի ավարտից 3 տարվա ընթացքում:

8.2. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել լոտերի պահպանումը, եթե Առաջարկողի և Կազմակերպչի միջև կնքված ածուրդի մասին պայմանագրով նախատեսված են պահատվությանը վերաբերող դրույթներ:

8.3. Ածուրդի անցկացման պայմանագրի գործողության ժամկետը համարվում է ավարտված, իսկ ածուրդի անցկացման ծառայությունը մատուցված, լոտ(եր)ի վաճառքից ստացված գումարը Առաջարկողին փոխանցելու (ածուրդը կայանալու դեպքում) և ածուրդների արդյունքների ամփոփ արձանագրությունը(ները) Առաջարկողին ներկայացնելու պահից:

9. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ

9.1. Հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս.

գ) գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել ածուրդային կարգով:

9.2. Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հողամասերի, որոնք օտարվում են հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:

10. ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10.1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներին համապատասխան՝ հողամասը վարձակալության է տրամադրվում ժամանակավոր օգտագործման համար:

Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:

10.2. Հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

10.3.. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին,

բ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց,

գ) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց,

դ) օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին:

10.4.. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝

ա) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,

գ) ընդհանուր օգտագործման տարածքները (գրոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր)՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում:

10.5. Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան:

10.6. Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) մինչև 20 քառ. մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար.

բ) տրամադրված հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցութային կարգով.

գ) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.

դ) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ինչպես նաև ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասն այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջանալիս.

է) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի ներկայացմամբ:

10.7. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքների ղեկավարների կողմից ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ:

10.8. Մրցույթները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներով սահմանված կարգով:

10.9. Մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ:

10.10. Մրցութային հանձնաժողովները հրապարակում են մրցույթի պայմանները, որոնք պետք է ներառեն ՀՀ հողային օրենսգրքով սահմանված պահանջները:

Մրցութային հանձնաժողովը կարող է սահմանել նաև այլ լրացուցիչ պահանջներ և պայմաններ:

10.11. Կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքերում մրցույթի պայմաններում նշվում են նաև քաղաքաշինական նորմերին, կառուցապատման պայմաններին և քաղաքաշինական սահմանափակումներին վերաբերող հետևյալ լրացուցիչ պահանջները՝

ա) հողամասի նկարագրությունը (կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը).

բ) կառույցի (կառույցների) հարկայնությունը, մոտավոր տեղադրումը հատկացվող հողամասում, կառուցապատման տոկոսը.

գ) շինարարության սկզբի և ավարտի ժամկետները.

դ) տարածքի բարեկարգմանը, պահպանմանն ու սպառարկմանը ներկայացվող պահանջները:

10.12. Զբոսայգիների, պուրակների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման այլ տարածքների վարձակալության կամ կառուցապատման իրավունքի մրցույթի պայմաններում նշվում են նաև՝

ա) կանաչապատ մակերեսի հարաբերությունը կառուցապատված (անջրանցիկ) մակերեսին (փաստացի և հեռանկարային)։

բ) տարածքի այլ սեփականատերերի և օգտագործողների տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի միավորների, դրանց առկայությամբ պայմանավորված՝ սահմանափակումների և սերվիտուտների մասին տեղեկությունները։

գ) նշված տարածքում բնակչության հանգիստը կազմակերպելու նպատակով կառուցապատում իրականացվելու դեպքում թույլատրվող օբյեկտների շրջանակը։

10.13. Մրցույթների անցկացման փաթեթում ներառվում են ինչպես վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի նախագիծը, այնպես էլ մրցույթով տրամադրվող հողամասի հատակագծի նախագիծը՝ որպես պայմանագրի նախագծի հավելված։

Կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում փաթեթում ներառվում է նաև մրցույթի պայմաններով նախատեսված՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումների, կառուցապատման պայմանների հիման վրա սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը։

Մրցույթի անցկացման փաստաթղթերի նախագծերի տրամադրումը վճարովի է։ Մրցույթի կազմակերպիչը մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 10-օրյա ժամկետում հաղթողին տրամադրում է լիազոր մարմնի որոշումը, կառուցապատման կամ վարձակալության իրավունքի համար տրամադրվող պայմանագիրը, հողամասի հատակագիծը, իսկ կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքը։

10.14. Մրցույթի արդյունքներն ամփոփելիս և հաղթողին որոշելիս՝ մրցութային հանձնաժողովը հաշվի է առնում առաջարկվող վարձավճարի (վճարի) չափը։

Առանձին դեպքերում կարող են հաշվի առնվել նաև՝

ա) բիզնես ծրագիրն ու հողամասի օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորումները։

բ) հողերի բարելավման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների իրականացման, նոր հողերի յուրացման, բնապահպանական և պատմամշակութային միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունները։

գ) արտադրության կազմակերպման, քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, օբյեկտի կարճ ժամանակում կառուցման և շահագործման հնարավորությունը։

դ) հողամասի ռացիոնալ օգտագործման երաշխիքները համայնքի, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, ազատ աշխատուժի օգտագործման նախատեսումը։

ե) համայնքի, մարզի մշտական բնակիչ լինելու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը։

10.15. Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ։

Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցույթում հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցույթի մասնակիցների կողմից։

Մրցույթի հաղթողին որոշելիս՝ առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք։

Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի (վճարի) չափերը,

հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:

9.16. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը և (կամ) հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու դեպքում գրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու (կառուցապատման իրավունք ձեռք բերելու) իրավունքից:

Եթե կրկնամրցույթը չի կայանում մեկ հայտ ներկայացված լինելու պատճառով, ապա հողամասը կարող է առանց մրցույթի 10-օրյա ժամկետում տրամադրվել առաջին հերթին հայտը ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ հողամասը կարող է տրամադրվել նոր մրցույթ հայտարարելով:

9.17. Տրամադրված հողամասի դիմաց գանձվող վարձավճարի (վճարի) չափը և վճարման պայմանները սահմանվում են պայմանագրով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:

9.18. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը:

9.19. Մրցույթների արդյունքների հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16-Ն

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՂԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ՄԵՐՑՈՒԹՅԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող 04-048-009-010 ծածկագրի արտադրական նպատակային նշանակության 555 քմ տարածքը մրցութային կարգով, 99 տարի ժամկետով տրամադրել վարձակալության կառուցապատման իրավունքով, արտադրական նպատակով շահագործման և համապատասխան օբյեկտների շինարարության համար:

2. Մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրման վարձավճարի չափ սահմանել՝ 82890 /ություն երկու հազար ութ հարյուր իննսուհինքուսուկա/ Հայաստանի Հանրապետության դրամ, մրցույթի մեկնարկային քայլը՝ 4144 /չորս հազար մեկ հարյուր քառասունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ: Մասնակցության վճար սահմանել 5000 /հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Առաջարկել գյուղապետին հանձնարարելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությամբ տրամադրող հանձնաժողովին իրականացնելու սույն որոշումից բխող համապատասխան գործառնությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ

Ա. Գրիգորյան

Գ. Սարգսյան

Խ. Տերտերյան

Կողմ

Դեմ

Զեռնակաի

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի մարտի «31»
Գ. Լուսապյուղ
Ժամը՝ 13⁰⁰





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱԿԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17-Ա

«31» մարտի 2014 թ.

թիվ 3 նիստ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և
հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղական
համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Նախադրոցական կրթություն»
0911 ծրագրի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածից
690 000 /վեց հարյուր իննսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար
հատկացնել Լուսազյուղ համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման 2-րդ փուլի
աշխատանքներն իրականացնելու և 40 000 /քառասուն հազար/ Հայաստանի
Հանրապետության դրամ գումար հատկացնել մանկապարտեզի շենքի վերանորոգման
աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեռնալահ
Ա. Գրիգորյան		_____	_____
Գ. Սարգսյան		_____	_____
Խ. Տերտերյան		_____	_____

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



2014 թվականի մարտի «31»
Գ. Լուսազյուղ
Ժամը 13³⁰